

ՔԱՂՎԱԾՔ

«ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՎՎԿ ՓԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ
ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ 26.04.2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 001
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԻՑ

Հարց 2. «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ 2018 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների և շահույթի բաշխման վերաբերյալ:

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ՝ զեկույցով ելույթ ունեցավ Ընկերության գլխավոր հաշվապահ Լիլիթ Դունամայանը: Ներկայացնելով Ընկերության 2018թ. տարեկան գործունեությունը՝ զեկույցողը ներկայացրեց Ընկերության ամփոփ ֆինանսական ցուցանիշները, ակտիվների, եկամուտների և ծախսերի կառուցվածքը, Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունները և տարեկան շահույթի բաշխման առաջարկը՝ 2018 թվականի գործունեության արդյունքներով ստացված շահույթի 5%-ը, որը կազմում է 98,137,015 (իննսունութ միլիոն հարյուր երեսունյոթ հազար տասնհինգ) ՀՀ դրամ, ուղղել Ընկերության պահուստային հիմնադրամի համալրմանը, իսկ շահույթի մնացած մասը՝ 1,864,603,279 (Մեկ միլիարդ ութ հարյուր վաթսունչորս միլիոն վեց հարյուր երեք հազար երկու հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամը, որպես չբաշխված շահույթ, ուղղել Ընկերության սեփական կապիտալի համալրմանը:

Քվեարկության դրվեց Ընկերության 2018 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները և շահույթի բաշխման առաջարկը հաստատելու հարցը:


Օրակարգի երկրորդ հարցի քվեարկության արդյունքները հետևյալն են.
կողմ՝ 100% ձայներին տնօրինող բաժնետեր
դեմ՝ չկա
ձեռնպահ՝ չկա:
Քվեարկության արդյունքում ժողովը միաձայն

ՈՐՈՇԵՑ

Հաստատել Ընկերության 2018 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները և շահույթի բաշխման առաջարկը՝ 2018 թվականի գործունեության արդյունքներով ստացված շահույթի 5%-ը, որը կազմում է 98,137,015

(Իննսունութ միլիոն հարյուր երեսունյոթ հազար տասնհինգ) ՀՀ դրամ, ուղղել
Ընկերության պահուստային հիմնադրամի համալրմանը, իսկ շահույթի մնացած
մասը՝ 1,864,603,279 (Մեկ միլիարդ ութ հարյուր վաթսունչորս միլիոն վեց հարյուր
երեք հազար երկու հարյուր յոթանասունհինը) ՀՀ դրամը, որպես չբաշխված շահույթ,
ուղղել Ընկերության սեփական կապիտալի համալրմանը:

Նիստը նախագահող՝



Արթուր Զավադյան

Նիստի քարտուղար՝



Մայրանուշ Գրիգորյան

30, 04, 2019թ

